

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Ստանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունւում է ամեն կողմով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԵՐԵՎԱՆ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԱԿԱՆՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակւում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌՈՒՄՈՒՄՆԵՐ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՄՍՄԱԳՐԱՍՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարայի տանը).
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրելու համար պէտք է գիտնէ հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Անտեղի շուշի և անտեղի խնայող.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մանգլիսից. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի վաճառական նախարարութեան տարեկան ծրագրի մասին.—ԽԱՆՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌՈՒՄՈՒՄՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկական և առողջապահական ժողովրդական գրքայինը.

Հասակին անյարմար զուարճութիւններ տալու վրա, բայց շատ բաւական է դրանում ամսական 10 ռուբլի տալ մի օր և է կորած, մեղրած ուսուցչին, որին հրաւիրում է որպէս դաստիարակ իր զաւակներին:
Հայ գործարանատէրը շքեղ կերպով կը սարքի իր գործարանը, ոչ ինչ չի խնայի արտասահմանից այլ և այլ կատարելագործված գործիքներ և մեքենաներ բերել տալու համար. իսկ երբ հարց կը դառնայ մի տեխնիկ կամ մասնագէտ վարձելու մասին, որը իր հմտութեամբ պէտք է հօգի և կենցեղ տայ ամբողջ գործարանին, հայը կաշխատէ այնքան չնչին ուժով նշանակել այդ մասնագէտին, որ ոչ մի օրինաւոր մարդ չի էլ ընդունի այդ պաշտօնը:
Հայ կալուածատէրը շքեղ գիւղական տուն կը շինէ իր կալուածքում իր սեփական բնակարանի համար, օտար երկիրներից բերել կը տայ կատարելագործված երկրագործական այլ և այլ գործիքներ և մեքենաներ, ահազին զուարճանք կը շուսի իր գիւղական կալուածքը արտաքուստ շքեղ դարձնելու համար, իսկ մի և նոյն ժամանակ կաշխատէ այնպիսի ողորմելի ուժով նշանակել կառավարիչ գիւղատնտեսին և այդպէսով, որ, ի հարկէ, ոչ մի ուսումնական այդպէս չեն վարձիլ նրա մօտ, այլ կը վարձվեն այնպիսիները, որոնք փոխանակ լաւացնելու կը փչացնեն կալուածքը իրանց

ԱՆՏԵՂԻ ՇՈՒՍՅՈՒՆ ԵՒ ԱՆՏԵՂԻ ԽՆԱՅՈՂ

Հայը առհասարակ շուշի է, բայց մի և նոյն ժամանակ նա խնայող է այնպիսի բաներում, որտեղ ընդհակառակն առատաձեռն պէտք է լինէր:
Եւ այդ երկայնքը նկատուում է հայի թէ բարոյական և թէ տնտեսական կենցեղում:
Հարուստ հայը դաստիարակում է իր երեխաներին, նա ոչինչ նիւթական միջոցներ չէ խնայում երեխաների հագուստի համար, նոյն իսկ շուշի կերպով է հագցնում իր զաւակներին, ոչինչ չէ խնայում թանկ թանկ խաղալիքներ առնելու իր երեխաների համար, ոչինչ չէ խնայում նրանց գուրդուրդներին համար, բայց երբ հարցը գալիս է իր մանուկների համար ուսուցիչ կամ տան վարժուհի վարձելու մասին, հայը աշխատում է վարձել ուսուցիչ կամ վարժուհի որքան հնարաւոր է էժան գնով: Նա պատրաստ է երեխաների խաղալիքներ կամ շորերի վրա հարկերներ ծախսել, ոչինչ չէ խնայում երեխաներին այլ և այլ իրանց

դամների ստուրի կծկում: Այնուհետև խօսվում է թէ ինչպէս պէտք է ստուգել խօլերայի գոյութիւնը և պատճառ է խօլերայի նշանները: Գիւրահաւատ ընթերցողը այդ կտորը կարդալու անշուշտ պէտք է բացակայէ, որ Եւրոպայի խօլերայի հիւանդութիւնը միշտ տարածված կայ մեր մէջ: Այսուհետև Աստուծոն, որ այդպիսի խօլերան համարեալ թէ չէ գոհում հիւանդներին: Աշխատասիրողը նկարագրելով խօլերայի նշանները մտքով անկապ, ոչ մի տեղ էլ չէ նկատում, որ այդ բոլոր նշանները միշտ կարող են շատ հիւանդներին էլ ունենալ, մասնաւոր չոր ամառայն ամիսներին, սակայն այդպիսի փորձած հիւանդութիւնները երկիւղելի չեն և առաջանում են ամառայն ամիսներին, երբ մարտոզական գործունէրն սակեւ են խանդարում իսկ մրդեղէններ կամ վատ յատկութիւն ունեցող կերակուր գործածելու և կամ ամառայն փոփոխական եղանակներից, երբ ցերեկը չոր է լինում, իսկ գիշերները ցուրտ: Բարեխիղճ աշխատասիրողը բարոյապէս պարտական է տալ ընթերցողին հասարակ և պարզ բացատրութիւն խօլերայի գոյութիւնը ստուգելու մասին, չեղտելով մի քանի անգամ, որ իւրաքանչիւր փորձութիւն նոյն իսկ բարձր լինելով սրտի յետ դառն և միանունների կծկումը հետ գեղ ևս խօլերայ չէ, սակայն էլ ոչ ընթերցողին երկիւղելի մէջ զցելով կարելի է վատ հետապնդել ունենալ, որ չէ համապատասխանում ժողովրդական ընթերցողի մէջ:

տղիտութեամբ և նահապետական միջոցներով:

Հայը կը կառուցանէ մի շքեղ ուսումնարանական շինութիւն, ոչինչ չի խնայի զբարոյի համար գրքեր, քարտէշներ առնելու, թանկարան սարքերու համար, իսկ այն մարդուն, որը այդ նոյն զբարոյին հօգի և կենցեղ պէտք է տայ, ուսուցչին հայը կաշխատէ նշանակել այնպիսի ողորմելի ուժով, որ ուսուցիչը կամ պէտք է քաղցած մեռնի, կամ գոնէ իր ամբողջ կենցեղը պարտքով ապրի, չը կարողանալով իր սուղ նիւթական միջոցներով ինչպէս ասում են ծայրը ծայրին հասցնել:

Հայը հարկեր հազարներ գործ կը ընէ մի շքեղ հոյակապ, սրբատաշ քարէն մի կենդեցի կառուցանելու վրա, կը զարդարէ կենդեցին թանկագին պատկերներով և զարդերով, իսկ քահանային, որը այդ քարեայ շինութեան մէջ պէտք է քարոզէ Աստուծոն խօսքը, առանց որի անկենդան է քարեայ շինութիւնը, որը մենակ կարող է և պէտք է կենցեղ տայ այդ քարերին, քահանային, ասում ենք, հայը ոչինչ որոշ ուժով էլ չի նշանակել, այլ կառաջարկէ նրան կամուր, պատահական նուէրներից այնպէս մուրացկանութեամբ ապրել, չը նայելով որ նոյն հայը պահանջում է որ այդ քահանան, որպէս զի բարոյականութեան կատարելատիպ լինի անպատճառ ամուսնացած, ուրեմն ընտանիքի տէր մարդ էլ լինի:
Եւ ամեն բանում հայը այսպէս է. անշարժ շուշի ծախսող, որտեղ աւելորդ է այդքան շուշի ու ծախսող լինել, և ուրիշ կողմից վերին աստիճանի խնայող, նոյն իսկ Ժյատ, որտեղ իսկպէս պէտք է առատաձեռն լինել:

Այժմ հարցնում ենք ձեզ, կարո՞ղ է արդեօք այդ տեսակ ուղղութիւնը, այդ տեսակ գործողութեան կենսական իրերի այդ տեսակ վիճակը առաջ բերել կենցեղի մէջ մի կրակակ պրօպրէտ, մի ճշմարիտ առաջադիմութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԱ ՄԱՆԳՂԻՍԻՑ
Օգոստոսի 5-ին
Ամիս 3-ին, ուրբաթ օր, տեղիս հայ աղագ

ընակութեան ներկայացուցիչները ներկայ էին եկեղեցում մի երկուստարը այրի կնոջ յուրարկաւորութեան տխուր հանդիսին: Պատարագի միջոցին փոքր ինչ շրջելով եկեղեցու բազում, խօսակցութիւն բացվեց այդտեղ կանգնած փայտեայ մի փղբոկի շինութեան վրա, որը 4—5 տարի առաջ տեղիս յայտնի վաճառական պ. Մարտիրոս Լազարեանց կառուցել էր իբրև ուսումնարանի համար, սակայն պարտի գործերը հետզհետէ անաջող գնալով նա անկարող է եղած աւարտել շինութիւնը, որը այնպէս բարձի թողի եղած մնալով հետզհետէ փտում և փչանում էր իմ հարցին թէ ինչու ձեռնհաս մարդիկ անտարբեր են գտնուում դէպի այդպիսի մի օգտակար գործը, տեղիս զօրքի ուստետի կապալաւոր Ձիթողեանց պատասխանեց, որ ինքն միշտ այստեղ չը գտնվելով, անկարող է հետեւել այդ քահանային, թէ և ամենայն կերպ համակրում է ուսումնարանի գործին և երբէք չէ խնայել, երբ դիմել են իրան որ և է միջոցներ ու այդ շինութեան յատակի համար տախտակներ են խնդրել իր արհեստանոցից:

Ապա հարցը լուրջ ընտելութեան անցնելով, նախ և առաջ մտածվեց ոչ այնքան շինութեան, որքան ուսումնարանի պահպանութեան ապահովող միջոցների որոշման մասին և նկատի ունենալով կեղեցու դրամագլխի (1070 ռ.) և եկամտի անշահան լինելը, որոնց վրա երբէք չէ կարելի յոյս դնել, պ. պ. Ձիթողեանց և զօրքի մարկիտանս Արտէմ Թէմուրազեանց մտածեցին իրանց սեպհական միջոցներից պահանջել այդ կարիքը, ըստ որում այնիս խօսք տուին իրանց կենդանութեան ամբողջ ժամանակամիջոցին վճարել առաջինը 25 ռ., իսկ երկրորդը 15 ռ. ամսական, ուսումնարանի շինութիւնը աւարտելուց յետոյ Ապա որդվեց ուսումնարանի շինութիւնը վերանորոգելու և պահպանողը լրացնելու համար հանգանակութեան գիտն տեղիս թէ մշտական և թէ ժամանակաւոր ամարանոցային հայ ազգայնակութեան շրջանում, ըստ որում պ. Ալէքսանդր խաղաղեանց խոստացաւ յիշուստ թուրք տալ յօդուտ շինութեան, և յոյս ունենը որ մնացածն էլ, որը չի անցնի 300 ռուբլուց, տեղիս ձեռնհաս անձինք չեն զլանայ լրացնել, յօդուտ մատող սերնդի կրթութեան գործի:

Թէ և պ. պ. Ձիթողեանց և Թէմուրազեանց միայն բերանայել խօսք են տուած ժողովրդի

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԻՍՈՒԿԱՆ ԳԻՔՈՅՈՒՄՆԵՐ

Քննել 23 երեսից բաղկացած մի աշխատասիրութիւն, ցոյց տալ նրա թերութիւնները, և որ գլխաւորն է, գիտութեան հակառակ փաստերը: Մի առ մի յիշել խօլերայի բժշկութեան և դեղինֆելկիական միջոցների անակողմութիւնը և վնասը, մենք աւելորդ ենք համարում, քանի որ դրա համար ստիպված կը լինենք մեր յօդուածի մէջ մտնել 3—4 անգամ 23 երեսից բաղկացած մի գնում: Մենք կը բաւականանանք մի քանի նկատողութիւններով, որոնցից ընթերցողը կարող է զգալիպէ կարգով թէ այդ գրքի մասին և թէ նրա հայերէն լեզուով հրատարակողի պարտաճանաչութեան մասին:
Գրքից սկսվում է խօլերայի հատուկտը և աննպատակ դաստորոշած պատմութիւնից: Այնուհետև 7 տողով բացատրվում է թէ ինչ է խօլերան: Աշխատասիրողի կարծիքով «Արիական կամ աւելի ճիշդ Հնդկաստանի խօլերան վարակիչ և համաճարակ հիւանդութիւն է... երբ մէկը վարակվեց, նրա սիրտը սկսում է յետ դալ, սկսում է առատ և ջրալի լուծողութիւն և ան-

նում ժողովրդական ընթերցանութեան զբոյսիչներին նպաստակիւն:
Ինչիցն է առաջանում խօլերան: Աշխատասիրողը այս բաժինն էլ կարգել է առանց ուշադրութեան, լրբել է երեսները անկապ նախադասութիւններով, ստեղծելով գիտութեան յայտնի ճշմարտութիւնները: Խօսելով ընդհանրապէս բացիլ է նրա վրա, աշխատասիրողը ասում է. «առանց օրի բացիլիներին անհն ընդհատվում է» այդ սուտ է: Մի կողմից (բացիլները) տարբեր են վերաբերվում օրին (թթուածինին): Մի տեսակ միկրօբների համար թթուածինը անհրաժեշտ է, առանց թթուածնի նրանք կենցեղ ունենալ չեն կարող, մեռնում են, միւս տեսակ միկրօբները ոչ թէ միայն կարևորութիւն չունեն թթուածին ստանալու, այլ մինչև անգամ թթուածինը նրանց համար մահաբեր է: Այդ հիման վրա Pasteur' միկրօբներին երկու կարգի է բաժանում. ա էրօբն էր, որոնք առանց թթուածնի գոյութիւն ունենալ չեն կարող և անաէրօբն էր, որոնք թթուածին ոչ թէ չեն պահանջում, այլ մինչև անգամ թթուածնի ազդեցութեամբ այդպիսի միկրօբները մեռնում են:
Շատ ծիծաղելի է և հետեւալ նախադասութիւնը. «հոչակաւոր հետազոտիչ Կոլբը ստուգելով այդ արարածների գոյութիւնը խօլերայով վարակված հիւանդների սրտիցսին (?) և աղիքների մէջ,

նրան բացիլ անուանեց», (7 երես): Մի կողմից ներ, ստորին սոււնիկեր, շիդօմիցեաներ և այլն, այդպիսի ընդհանուր անունով են կոչվում բժշկական գիտութեան մէջ այն մանր ախտածին արարածները, որոնք վարակիչ հիւանդութիւնների սկզբնապատճառներն են: Մի կողմից ներ ձեռքին նայելով գիտութիւնը նրանց այլ և այլ անուններով է որոշում. մանր դիզաձև միկրօբները կօկկեր, միկրօկօկկեր են կոչվում. եթէ գրանք զոյգ զոյգ են տեղադրված ասվում են դիպլօկօկկեր, իսկ շրջայածն դասաւորված կօկկերն անուանում են ստրէպտօկօկկեր. իսկ եթէ խուր խուր են հաւաքված ասվում են ստաֆիլօկօկկեր և այլն: Միւս տեսակ միկրօբները ձողի նման զանաձև տեսք ունեն, որոնց երկայնութիւնը ու լայնութիւնը այլ և այլ կերպ են միմեանց յարաբերվում. նրանք կարող են կարճ կամ երկար լինել, հաստ կամ բարակ, ուղիւ կամ կոր: Այդ հանդամներ ներին նայելով գիտութեան մէջ նրանք այլ և այլ անուններով են յայտնի: Եթէ ձողանման միկրօբը ուղիւ ու կարճ է և նրա հաստութիւնը յարաբերվում է երկայնութեանը, ինչպէս 1:2 կամ 1:3 ասվում է բակտերիա. իսկ եթէ 1:4 կամ 1:6, ասվում է բացիլլա. եթէ միկրօբները որոշաձև են՝ սպիրիլանտան են կրում, իսկ սակի որովածները սպիրիլանտաներ են կոչվում:

առաջ իրանց անելի նուիրատուութեան մասին, սակայն երբէք կանխաճեալ տեղիք չը կայ և ես խորին կերպով հանդիման եմ երկուսի էլ խոստման անկախ կատարելու մէջ. միայն պէտք է հոգացած, որքան կարելի է, ուսումնարանի շինութիւնը կարգի բերել և գործը սկսել: Պ. Ջիւրիցեանց բացակայելով այստեղից մի ամիս ժամանակով, հարկաւ մեծ հոգով այդ մասին զբոսում է պ. թէմուրազեանցի վրա, որը, ի հարկէ, ազատ միջոցները չի ինչպիսի գործի իրազրծման մասին կանխապէս շնորհակալութեան արժան ևս պարտենները և յոյս ունենք որ այսպիսի յետ ընկած տեղում սրանց հետեւորները չառ կը գտնուին:

Տեղի միակ զինուորական կողմում երկէ վերջին ընտանեկան երեկոյթը եղաւ, որովհետև զօրազուգը ամսիս 8-ին ամբողջովին տեղափոխուած է թիթուէթ (թիֆլիսի մօտ) իր հետ տանելով և երաժշտական խումբը, որը բացի ընտանեկան երեկոյթներէն, շաբաթը երկու, երեք անգամ նուագում էր այստեղի «Պարկում» և «Բոչայուում»: Երաժշտութեան համար ամառանոցաւորներին հաւաքած գումարը, ինչպէս ասում են, մօտաւորապէս 300 ք. է հասած: Այդ միակ բաւականութիւնը ևս զուրկ ենք մնայու:

Երկու օր է խկական Մանգլիսի մէջ մի քանի կովեր են հիւանդացած, որի մասին դեռ ընտուրիւն չէ արված և հիւանդութեան պատճառները որոշելու միջոցներ չեն ձեռք առնված. չը լինի թէ եղջիւրաւոր կենդանիների այդ անբիշ ժամապիտոք այստեղ, Մանգլիսի մէջ, են ծա կոխած լինի, որտեղ կովերի կաթով իրանց անողջութիւնը այստեղ որոշող բացառական ամառանոցաւորներ են անցվում: Գարձնում ենք ու՛մ հարկն է ուշադրութիւնը այդ դէպքի վրա. յոյս ունենք որ մեր ոստիկանապետը, որին արդէն յայտնված է այդ մասին միջոցներ ձեռք կանուխ հիւանդութեան առաջն առնելու համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՐՔԵՐ

Թիֆլիսի թիւրքաց ընդհանուր հիւպատոսարանը ուղարկել է մեզ սպազորելու հետեւեալ պաշտօնական հարցազրույթիւնը. «Տեղական լրագրիչները, զօրաստի 10-ին հրատարակիցին մի հետագիր լծողից, նոյն զօրաստու ամսվայ ութից, Մուշի քրիստոնեաների կոտորածի մասին: Օսմանեան հիւպատոսարանը, հիմնվելով ստացած լուրերի վրա, յայտնում է, որ յիշեալ հեռագիրը բողոքովին սխալ է»:

Թիֆլիսը սկսել է փոքր առ փոքր կենդանանալ իր ամառային թմրութիւնից: Դպրոցական տարւելչանք մտանում է և աճա ամեն կողմից սկսում են հաւաքով աշակերտներ և ծնողները զատի իրանց դասակներին բերում են զարդ տալու համար:

Թիֆլիսում է բանալ բարձրագոյն աչք և կենդանանալ:

Ուրեմն հոշակաւոր կօխը հարկաւորութիւն չունէր խօչերային միկրոբին բացել անուշը տալ, քանի որ գիտութեան մէջ միկրոբների ախտաները, նայելով նրանց ձևերին, արդէն որոշված են: Խօչերային միկրոբը ստորակէտ (i) նշանին շատ նման լինելով, ստորակէտ անուշը միկրոբ անուշն էլ է կրում: Ժողովրդական ընթերցանութեան համար զբոյժ աշխատասիրողը միշտ պէտք է նկատի ունենայ, որ գրութիւնը պարզ լինի, չը բարդվի անբացատրելի տերմիններով, եթէ ոչ ընթերցողը մի և նոյն գրքովի մէջ մի տեղ բացիլը, միւս տեղ բացիտերի կարգաւորով կը չիտվիլ: Բաւական է ընթերցողին իմանալ, որ վարակիչ հիւանդութիւնների ակտիւմն արարածներին միկրոբ են կոչում, այլ թէ նրանց ձևը գիտութեան մէջ ինչ անուններով է որոշվում դա բողոքովին անկողը է:

Ինչն է նպատակով խօչերայի տարածմանը: Այդ երկու երեսից բացակացած բաժնում աշխատասիրողը ցանկութիւն է ունեցել խօչերայի տարածման պայմանները և ունեցել Պետենսօֆերի և Վիրխովի (կօխի) կարծիքներն առաջ բերել: Բայց ընթերցողը մտում է չաւարած, չը հասկանալով թէ ինչ է մտածում Պետենսօֆեր և ինչ է ասում Վիրխով: Պետենսօֆերի և Վիրխովի թէօրիաները ընթերցողին պարզելու համար, աշխատասիրողը պէտք է մի ընդհանուր տեսութիւն անել դեռ տնի ջրի բարձրանալու և ցա-

դործական զարդ Ռուսաստանի մի օր և է յարմար տեղում:

Օգոստոսի 12-ին Բեթդիեմի ս. Աստուածածնի տօնն էր, որը Թիֆլիսում յայտնի է «Բեթդիեմի Օր» անունով: Գեա վաղ առաւօտեանից սկսված էր բարձր դանդաղ կողմերից մարդկանց մի հոսանք դէպի եկեղեցին, իսկ երեկոյին թէ եկեղեցու բարձր և թէ մարձակայ փողօցները մի արտասովոր կենդանութիւն էին ստացել:—Կեր ու խում, երգ, պար, ամեն բան միասին խառնված թընդհնում էին օդը բազմատեսակ արձուկներով: Ժողովրդական այդ տօնը մեծ բաւականութիւն է պատճառում հարգաւոր մարդկանց, որոնք իրանց աւօրեայ կենցաղում ուրախանալու շատ քիչ առիթներ ունեն:

Մեզ հարցրում են, որ նոր ձեռնարկված Մեսրոպ քահանայ Մեկեան արդէն մտել է իր պաշտօնավարութեան մէջ, իբրև Երևանի թեմի զբոսիչների թեմական տեսուչ:

Արդէն առիթ ենք ունեցել նկատելու և այժմ էլ կրկնում ենք, որ անհրաժեշտ է, որ բոլոր թեմերում լինեն թեմական տեսուչներ: Եթէ մի երկու թեմերում, ուր համեմատաբար շատ զարդոցներ կան, որոշված է թեմական տեսուչներ նշանակել, ինչն առնչվելով պաշտօնական չը պէտք է ունենալ և միւս թեմերում, ուր, մասնաւոր նոր զարդոցներ բանալու համար, հարկաւոր են այդպիսի շարժական գործիչներ, ինչպիսիք են թեմական տեսուչները, որոնք պարտաւոր են միշտ պատել թեմի այս և այն կողմը և տեղն ու տեղը հոգով զարդական հարցի մասին:

4020013 մեզ գրում են. «Ինչպէս ասեցի, այս անգամը ներկայացումները սեղան է կօչրում: Երբերումս այստեղի բօսողայում արվեց սիրողներին մի ներկայացում առեւերն լեզուով: Խաղում էին «Познакомились» և «Запутанное дело» վճղովիները: Գները շատ էման էին. ամենամեծը սեղանը 75 կօպէկ արժէր, այնուհետև 50 կօպ. և 20 կօպէկ: Այդ պատճառով բօսողան կատարելապէս լի էր: Սիրողները լաւ էին պարտասեղ իրանց դերերը և նրանցից մի քանիներ նոյն իսկ դերասանական տաղանդ ցոյց առեցին իրանց դերերի կատարման մէջ»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Ամսիս 3-ին վերջ տունը իր կենդանի անձնատպանութեամբ, հոգեպէս հիւանդ Ա. Գ. հանց: Իր ժամանակին նա լրենելով հարուստ, բացի այլ և այլ աչքի ընկնող բարեգործութիւններից, յիմնական թակամանրում, գտնվելով Երուսաղէմում, մի խոշոր գումար ընծայեց Երուսաղէմի միաբանութեան դանձարանին»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը սպազորելու համար. «Գաստիարակու-

ժանալու առողջապահական նշանակութեան մասին: Այդ հարցի բացատրութիւնը բարձր լինելով հարկաւորութիւն էլ չը կայ ժողովրդական ընթերցանութեան զբոյժի մէջ յիշել անգամ: Բաւական է ասել ընթերցողին, որ անմաքութիւնը նպաստում է միկրոբների աճմանը, բայց թէ դեռտիւն և նրա մէջ գտնված ջուրը ինչ դեր են խաղում վարակիչ հիւանդութիւնների պատճառարանութիւնների մէջ, զա աւելորդ է: Իսկ յիշել Պետենսօֆերի և Վիրխովի թէօրիաները և չը բացատրել զա ապիտուութիւն է: Մենք հաւատացած ենք, որ ոչ թէ այդ գրքովի ընթերցողները, այլ նոյն իսկ աշխատասիրող պ. Н. И. Богословский, հրատարակիչ պ. Բ. Մերեմեան և նմանապէս թարգմանիչը բողոքովին գաղափար չէին կարող կազմել գեանի առողջապահական նշանակութեան մասին:

Ով ասելի է արամալված խօչերայով հիւանդանալու: Այս բանում, որ պէտք է ասել վատտիլի կարգով կուտակումն է, ի միջի այլոց պատմվում է և մի յիմար անկեղծօտ, ընթերցողին համոզելու, որ երկրորդ ասելի է արամալվում խօչերայով հիւանդանալու, քան թէ այլ պատճառները: Ժողովրդական ընթերցանութեան համար զբոյժ զբոյժի մէջ մտցնել մնացածութիւն զբոյժը մի անկեղծօտ, մնացածութիւն և անմիտ ցանկութիւն է:

Գրքովի 14-րդ երեսից սկսած մինչև վերջը

թեան զարդարելու աչքի առջև ունենալով, չենք կարող ուրանալ որ մեր զարդոցները դեռ չեն կարգանկարված վերջնականապէս և որ մանուկը նրանց մէջ չէ կարողանում զարգացնել իր մաստիարակները զլուսարարական յիշողութիւնն և կարգացնում իրանց սաների մէջ, ամեն բան անգիր անել առավել երկնաներին, և դրանով իրանց աշխատութիւնը համարում են սպակված: Մեր դաստիարակները չունեն մանկավարժական բարձրագոյն սրտեմաների հետեւութիւնը, որպէս զի իրանց կողմից ընդարձակել կարողանային մանուկի մտաւոր աշխարհը, լայնացնէին նրա սահմանափակ հասկացողութեան հորիզոնը: Ամեն մի դասատու իր ցանկացած, իր բերան առած մտքի ամբողջութիւնը: Չունենք (քիչ բացառութեամբ) լաւ մանկավարժներ: Եւ փոխանակ արբտունջ յայտնելու, պէտք է հասկանանք որ պէտք է վերջապէս փոխել մեր ընթացքը, պէտք է հասկանանք, որ լաւ մանկավարժներ ունենալու միակ միջոցը նրանց նիւթապէս և բարոյապէս քաջակերելն է»:

Մեզ խնդրում են սպազորել հետեւեալ նկատողութիւնը: «Որքան կարողացել ենք տեղեկանալ, մի քանի ջրբաժան ծառայողներ տակաւնհարով և թուլութով ջրկիրներին նեղացում են. ամեն անգամ տարած ջրի համար մարկա չեն վերցնում թէ երեկոյին հաշիւ կը տանենք» և երեկոյան նրանցից ասելի են պահանջում: Այդպիսի դանդաղանք ու արտունջ կայ յատկապէս Ամաքի մեծ փողօցի վրա գտնված ծորակից և Պօկրոսկայա կաղաքում մօտի ծորակից ջուր բաժանողների վրա: Գարձնում ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնն այս ազդ երեկոյի վրա: Խեղճներ կենդանուր մարդ ևս այստեղ մի քանի կօպէկ աշխատելու համար, այն էլ մի քանիսի շնորհով զրկանքներ են հանդիպում...»:

Հաւաքում Պօկրոսկայա կաղաքայից գիշերներն անտանելի դարչահոտութիւն է բուրում. մեղ մինչև անցնում է նրա մօտից չունչը կտրվում է: Ամենայն օր այնտեղից արը տակաւնհարով դուրս են տանում, ուրեմն կաղաքայի շուրջ գտնված խիտ աղբաքանկութիւնը զօրազուրկ են ունի միշտ նոյն զարչելի բուրմունքը հոտոտել: Մեթէ չէ կարելի այդ կողմերից ներքուղի անցկացնել և ազատել աղբաքանկութիւնը անտանելի դրութիւնից:

Մայրաքաղաքի լրագրիչների մէջ սպված են Պետերբուրգի հայոց եկեղեցու սան մէջ պատահած զօրազուրկ դէպքի մանրամասնութիւնները: «Փորածնները երկէ վերջացան զիշերվայ մօտ ժամը 1-ին: Գիշերը, ճրագներ լուսով գտնվեցան հինգ դիակներ. բոլորն էլ դիչերն և եթ Մարիամեան հիւանդանոց ուղարկվեցան: Մի քանիսներին ճա-

պատմվում է, թէ ինչ միջոցներով հնարաւոր է պահպանել խօչերայով հիւանդանալուց, ինչով են բուժվում խօչերայից: Այդ 8 երեսից բարձրացած կտորը, որ զբոյժի ամեն ասելական մասը պէտք է լինի,—չը հաշելով այն կողմերը, որոնք վերցնում են ներքին գործերի միջխտրութեան բժշկական խորհրդի առաջարկութիւններից և պաշտօնապէս սովորած են «Правительственный Вестник» պետական օրգանի 15 յուլիսի 1884 թ. համարում, և ի դէպ է ասել, այդ իրատեսի ձևով առաջարկութիւնները տանտեակ հազարներով ցրվում են ժողովրդի մէջ խօչերայի ժամանակ և իւրաքանչիւր աշխատասիրող ժողովրդական ընթերցանութեան համար զբոյժի կազմելիս մտցնում է իր աշխատասիրութեան մէջ,—մնացած գրութիւնն անկախ նախադասութիւններ են և առանց կրկնելու վերցնում են բժշկական գրքերից և մինչև անգամ ընդհանուր պրեեսայից: Խօչերայի լուծողութեան դէմ ամենալաւ (այս բառը թարգմանչիւր թողի է, երկի ընդդրմամբ հատկանալով այդ բառի անտեղիւթիւնը) միջոցը աֆրօսն է (опиѳ): Ժողովրդական ընթերցանութեան համար զբոյժի մէջ խորհուրդ սալ խօչերայի դէմ օպիւումի գործածութիւնը, մեծ վատաւորութիւն է. այդպիսի առաջարկութիւնը հիւանդի յօնքը շինելու տեղ կարող է և աչըը հանել, մանաւանդ անտեղիների և ձերերի վերաբերմամբ: Խօչերայ հիւանդութեան ընթացքը այնպիսի պէտքեա փոփոխութիւններ է

նաչեցին ընկերները, իսկ էրկուսին անկարելի էր ճանաչել, որովհետե շատ ալանդակված էին: Մի քանի բանտարներ երկէ տագնապի ժամանակ փախել են և մինչև այժմ չեն երևում, այդ պատճառով փախկնում են, որ չը լինի թէ հանգուցեալի անուշը բացակայ եղած կենդանի մարդու սանն Հայոց եկեղեցու սան մէջ այսօր 10 ժամին քննութիւն է կատարում մի առանձին յանձնաժողով պրօկուրօրի և քննիչի հետ միասին: Յանձնաժողովի գործերին մասնակցելու համար էլի պէտքներ էլ են հրաւիրված: Հրամայված է փայտերը, գերանները և տակաւնները այնպէս թողնել, ինչպէս որ երկէ թողել են հրդեհաշէնները փորածնների ժամանակ: Ելիկի կրօսակիտի վրա մինչև այժմ հետաքրքրողներին ահագին խմբեր են հաւաքվում: Կիպերանները այն երրուկացութեան եկան, որ զօրազուրկեան պատճառը 56 արջին երկարութիւն ունեցող քանդված կարնիդն է եղել, բայց արդեօք մեղաւոր է այստեղ ցէմէնտի յատկութիւնը, թէ նրան թրջող անձնըր—դեռ ևս որչափի չէ պարզված: Այսօր հայոց հասարակութիւնը արտակարգ ընդհանուր ժողով կազմելով (վճռեց 1) սպանուածներ ըստը ընտանիքներին միանգամից նպաստ տալ: 2) սպանված բանտարների բոլոր դասակներին ընդունել Աֆօնեան բարեգործական ընկերութեան հովանաւորութեան տակ և կրթել նրանց ընկերութեան հաշուով տաս տարի շարունակ»:

Մեհիլի զիւղից մեզ գրում են. «Այս տարի մերերը փչացրեց կարճեան, Աղարակ, Ատրիս և Գուտեմինի զիւղերը ցանքերը: Այդ զիւղերի ընակիչները քսան պուղ ցորենից մի պուղն են ձեռք բերել: Խոսն ու դարմանը պակաս է: Մերերը Մեղրի զիւղում բաժակի ցանքերն էլ մի փոքր միասնացրեց: Բամբակի բերքն այս տարի Մեղրիում շատ սակաւ է, որովհետև չիւրա և կարմրակ հիւանդութիւններով վարակվել են բամբակի արտերը: Վնասը մեծ է: Խաղողի բերքը Մեղրիում և նրա շրջակայ գիւղերում՝ Դանիճոր, Թղուտ, Ալիքարա, Մանլե, կարճեան և Վարճաւար ներկայ տարին շատ առատ է: Յօրենք միւս մօտ ծախվում է պուղը 1 բուղը 10 կօպէկով, իւղի պուղը 10 բուղով, պանիրը պակաս է: Օղջիւր է և անլեւաս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻՍՏԻ ՎԱՃԱՍՈՒՍԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՂԵՍՆԵՐԸ

Անգլիացի մի վաճառական, երկար ժամանակ ապրած լինելով Թիւրքիայում, հետեւեալ կարծիքներն է յայտնում անգլիական մի լրագրի մէջ, որ առաջ են բերում արտասահմանի հայոց լրագիրները:

«Եթէ արդի արհեստը և շատ մը նոր արհեստ ու ճարտարութիւնը չեն զարգանար ի Թուրքիա»

ենթարկվում, որ ստատիկ ներգործութիւն ունեցող դերերը գործածութեան նշանակութիւնը բժշկելով միայն կարող է որոշել: Ժողովրդեան ընթերցանութեան համար զբոյժ զբոյժիները մէջ զբոյժ պիտի դեղեր առաջարկելն անօգուտ և մինչև անգամ վնասաւոր է. բաւական է պարզ և հանգամանաբար պատմել հիւանդի հոգաւորութեան ամենայն ձևերը, հիւանդի նեղութիւնները նուազացնող անյիւստ միջոցները և մանաւանդ ասել լուշադրութիւն դարձնել համաճարակումը սահմանափակելու վրա, և առաջարկել իբրև հասարակապետանողական միջոց, լուրջ և նպատակայարմար զեղիֆիկցիական նիւթեր, որոնք յայտնի են գիտութեան մէջ իրանց նպատակայարմար միկրոբային յատկութեամբ: Պէտք է չեղանկով առաջարկել ընթերցողին անպայման մաքրութեան պահպանել իր բոլոր նիւտ ու կացի մէջ և զի տակցաբար վերաբերվել զեղիֆիկցիական միջոցների գործածութեանը: Յաւ է տեսնել, որ 1890 թ. ի խօչերայի մասին հրատարակվող ժողովրդական ընթերցանութեան համար զբոյժի մէջ զեղիֆիկցիայի համար այնպիսի առաջարկութիւններ են լինում, որոնք իբրև անպատակայարմար միջոցներ արկիվներում են միայն յիշելու: Գրքովի մէջ յիշած ծծմբի գործածութիւնը, որ ի դէպ է ասել, այդ միակ նպատակայարմար միջոց է յիշել աշխատասիրողը, չէ պարզված. կարելի է մի պուղ ծծմբի ծխել անտանակի մէջ, բայց եթէ անտանակի ծակ ու պուճարներ չեն ամրապնդած,

յանցանքը թուրքերի հողին ու կլիմային վերա- գրելի է բնառ: Թուրքերի ժողովրդեան մէջ իսկ կը պակասին ճարտարութիւն, արհեստի սէր, և գործունէութիւն: Օրինակի համար, թուրքի ըն- տարի խաղող կարտադրել, և բնիկներն այնքան անխելով են զինի շինելու և վաճառելու որ հիմակ օտարազգիք ձեռք դարկած են այս գործին: (Նա- մակապէս կը մշէ կընդլայնի այգիներուն յայտը վիճակին, և անզիւական ընդերութիւնն որ նոյն այգիները կը շահագործէ: Նամակապէս կը յարե- թէ այս բնիկները ինչ Բարեկրօնայ Հրօնդանն, և Նարայիսի և Մալմայէն զինի յանձնարարու- թիւններ կընդունին, և Անդլիայի «գրեթէ ամեն օր» յանձնարարութիւններ կողման իրեն):

«Երբ արհեստներ ալ դարձանալու համար այստիկ ձեռնարկեցութիւնն սր կը կարօտին: Թուրքի կարող է իւր խաղողին չափ ընտիր պարտիկը արտադրել ամեն տեսակէ: Քալիֆոր- նիոյ մէջ պտուղները մեծ հարստութիւն են: Հոն հաստատուող դրամատեսերը և արհեստագործք գործունէրը մասնաւոր գործարաններու մէջ կը մտնեն, երկար ժամանակ պահուելու վիճակի մէջ կը դնեն, և աշխարհի ամեն կողմը կը դրկեն տուփերով և սնտուկներով: Այն տեսակ գործա- րաններ թուրքերը մէջ ալ կընան հիմնովի, և իրենց պտուղներով մեծ տուրեսու կընան ընել թուրքիացիք:

Ճախել նախնական ճախքէն ալ պակաս և դար- ձեալ շահիլ, այնպէս որ թուրքերը մէջ չաքարի ճարտարութիւնն ևս նոյն եղանակու պաշտպա- նուելու կը կարօտի ի սկզբան:

«Թէ բնիկ ճարտարութիւնն որչափ շահաւոր կընայ հանդիսանալ, և նոր ասպարէզներ բանալ, իբրև օրինակ յիշեմ կապերի գործն, յորում ինչ- ինչ նոր յատակագրերու և դժգոյթութիւններու ընդունելութեան հնորհիւ, օտարազգեաց ճաշակն աւելցաւ օտանման կապերներու վրայ, և վեր- ջին հինգ-վեց տարուց մէջ արտադրութիւնը կընկատուեցաւ: Այս տուրեսու օր ըստ օրէ կառնի կը դարձանայ, թէ և ամեն հարողակցու- թիւնն բացակայութիւնն ամեն ժամանակ արգելք է արհեստական և աւետարական դարձանքն: «Կիմանամ թէ թէքը վայրի վիճակի մէջ կը բուսնի Պրուսայի լեռանց վրայ, և դարձեալ բանի մը հարկաւոր կը լինի: Բայց ես ի կաւկասիա թէքի կանոնաւոր մշակութիւնն տեսայ (?)» և կը զարմանամ թէ ինչու համար չը մշակուի թուրքերը մէջ շահաւոր կերպիւ: Միակ անպատահութիւն երկաթուղեաց պակասութիւնն է, և ուրիշ ուրիշ անպատահութիւն: Ասոնցմէ դուրս չը կայ ար- գելք անհատական ձեռնարկեցութեան արհեստական և աւետարական ասպարէզներու մէջ:»

ՄՐՏԱՌԻՆ ԼՈՒՌԵՐ

—Վանի նախկին կուսակալ խալիլ-փաշա ար- ղէն թողնելով իր պաշտօնատեղին՝ Վանը, ուղե- ւորվել է Կ. Պոլսը:

—Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը ատենա- պետ զօկտօր թիրեաքեան հրաժարվել է իր պաշ- տօնից:

—Գերմանական կայսրի Ռուսաստանն այցելու- մասին ուռուցք մամուլի կարծիքը աչքի առաջ ունենալով, «Daily Telegraph» լրագրքը նկատում է, որ ամենին պատճառ չը կայ կասկածելու Ռուսաստանի խողադարձութիւնը: «Կարելի է յուսալ—աւելացնում է լրագրքը,—որ կայսրնրի տեսակցութեան ժամանակ համաձայնութիւն կը կայանայ, որով, երբեք կը վերացվեն յօգուտ տար- րեքը Արեւելքում:

—Վերջերի գործակալութեանը՝ Լօնդօնից հե- ռագրում են օգոստոսի 6-ին. «Պարլամենտի սե- անքն յետաձգված է: Այդ առիթով կարգադր- ղահական ճառի մէջ ասված է, որ Անգլիայի յա- րաբերութիւնները օտար պետութիւններէ հետ ա- ռաջվան պէս խաղաղ և բարեկամական են: Ապա ճառի մէջ յիշված է Գերմանիայի և Ֆրանսիայի հետ դաշնագրի կապելու և ստրուկները ա- ռեւտուրը ռաջացնելու համար կարգված կօնֆե- ըրնցիայի մասին: Ճառի վերջում կարճաօտ յիշ- ված է պարլամենտական նիստերի օրէնսդրական աշխատութիւնների մասին:

—Բողբարական էկզարխի բերածներ տալու հետ միաժամանակ լուր տարածվեց, թէ տիգե- ղական պատրիարքը վճռել է հրաժարական տալ:

Այդ առիթով ստացված վերջին տեղեկութիւնն- րի համեմատ, մեծ վիղիւր Վիսամի-փաշա մի ծա- նուցում ուղարկեց պատրիարքին, որի մէջ ասված էր, թէ Բ. Գուսը Կիւսիսի Վ-ի հրաժարականը չէ ընդունում, որովհետև յունաց եկեղեցու իրա- ռուցները բոլորովին խախտված են թուրքաց կա- ռավարութեան կարգադրութիւններով: Այդ ծա- նուցագիրը սինոդը ուշադրութեան առաւ, բայց որովհետև պատրիարքը սկսում է իր հրաժարակա- նի վրա, այդ պատճառով վերջնական վճիռ չէ կայացած: Պատրիարքը պահպանվում է բազ- մաթիւր ստիկաններով, և Կ. Պոլսում խոսում են, որ պատրիարքը Կիւսիսի պատրաստում է ճանա- նագարն ընկնել կամ Օղէտա և կամ Աֆօն:

—Վերջին անցքերի ազդեցութեան տակ Յու- նաստանում կազմվեց հանրահեղինակական մի կուսակ- ցութիւն: Այդ կուսակցութիւնն ունի սոցիալական և ազգային որոշ պրոգրամ, որի ղեկավարն է պատգամաւորների ժողովը: Անդամ Րալլի: Կուսակ- ցութեան ղեկիւն է. «Չենք ցանկանում ոչ Տրի- կուպիսին, ոչ էլ Գեւրմանիսին, ցանկանում ենք միայն յոյն ժողովրդի ազգային վերածնութիւնը»: Կուսակցութեան հրատարակած շրջաբերականի մէջ ասված է, որ Տրիկուպիս կուսակցական շա- փերի վրա հիմնված կառավարչական սխառնու- ջրանց երկրը և նրա պատճառով հեղինակաւոր- թիւնը դրսից ենթարկվեց ծանր վերաւորանքի: Ինչ վերաբերում է Գեւրմանիսին, նա այնպէս պարզ ասպացուցեց իր անընդունակութիւնը, որ անկարելի է այցելել կրիտիկական ժամանակ կրկին հաւատալ նրան երկրի կառավարութիւնը: Այժմ հարկաւոր են ոչ թէ վախկոտ ծերեր և հա- չիւ չը դիտող զիպոնանտներ, այլ աներկիւղ և ե- րիտասարդ մարդիկ: Առհասարակ շրջաբերականից երևում է, որ նոր կուսակցութիւնը միայն ունի գործելու համայնական ձգտումներին հասնե- րու համար, և այդ պատճառով այդ կուսակցու- թիւնն արդէն մեծ ժողովրդականութիւն է վայե- րում ուսանողների և կրթացիների մէջ: Կուսակ- ցութեան առաջնորդ Րալլի պատկանում է Յու- նաստանի ամենահարուստ ընտանիքներից մէկին, որի անդամները բանկային աներ ունեն Աթէն- քում, Ալեքսանդրիայում, Կ. Պոլսում, Օղէտայում և Լօնդոնում և յօդուա լրանց հայրենակիցները ար- քած խոշոր ներգրաւութիւնների համար թէ Յունաստանում, և թէ արտասահմանում մեծ յար- զանք է վայելում: Շուտով լինելի ընտրութիւն- ներին Րալլի յոյս ունի իր կողմը դրաւել պա- տգամաւորների երրորդ մասը: Պէտք է ասել, որ այժմ յունաց ջաղաքական երիտասարդ գործիչ- ներից շատերը համարում են նոր կուսակցու- թիւնը, իսկ Աթէնքում ամենատարածված «Էֆի- մէրիս» լրագիրը անցած արդէն նրա բանակը:

ԽԱՌՆ ԼՈՒՌԵՐ

Սպանիայի հռչակաւոր պետական գործիչ կաս- տելար դիտուարութիւն ունի հետանալ հասարա- կական գործունէութիւնից և դրել Սպանիայի

պատմութիւնը ու «Քրիստոսի կեանքը»: Բնակի- նան նա գնում է Երուսաղէմ աչքով տեսնելու այն սուրբ տեղերը, որ ինքն պէտք է նկարագրէ:»

Լուր է տարածվել, որ Սերբիայի նախկին թա- դաւոր Միլան պակովում է Վլադիմայի նախ- կին նախագահ Բարթոլոմէյ Սպիլիկ հետ: Տիկին Բար- րոս 50 միլիոն ֆրանկի կարողութեան ունի:

«Frankfurt. Zeitung» թերթը պատմում է, որ Նիւ-Եօրկում այժմ մի երգչուհի է գանգում, որի աստիճանի մէջ բրիտանիներ են տեղաւորված: Ատամնաբույժից մէկը, որին երգչուհին զիմը էր իր փաստ ատամները ուկով լցնելու, խոր- հուրդ էր տուել երգչուհու, ամեն մի ուկով լցը- րած ատամի վրա բրիտանա տեղաւորել, հաւա- տացնելով նրան, որ բնի վրա երգելու միջոցին, ճրագները լոյսի ազդեցութեամբ, ամեն մի ուկով լցը- րած ատամները մի անսովոր տեսարան կարող են ներկայացնել: Եւ ճշմարիտ, առաջին փորձից մի տարորնակ էֆէկտ ստացվեց բնի վրա, այնպէս որ հանդիսականները ապշած էին մնացել, նայելով երգչուհու արեգակաւախալ ա- տամներին:

Մօտ օրերս վաշինգտօնի սենատում մի ծա- նուցագիր առաջարկվեց, որով խնդրվում է 2000 դօլար, արհեստական անձրևներ առաջացնե- րու փորձեր անելու համար: Դժանագիրը պաշտպանում էր սենատոր Ֆարուէլ, որը ջերմ կուսակից է այն թէօրիպիս, թէ մի յայտնի բարձրութեան վրա կառուցված ճայթիւնը, օդի խոնաւութիւնը թանձրացնելով կաթիլների է փոխում: Պահանջված գումարը արդէն նշանակ- ված է և այժմ Ելջօրաշու և կանգաւ զայտարած ուղղությամբ է ինժեներների ղեկավարութեամբ մի մասնախումբ փորձեր անելու համար: Պէտք է թողնեն մի քանի օդապարիկներ, իւրաքանչիւրում 25 ֆունտ զինամետալ: Երբ օդապարիկը բարձրա- նայ 3000 ոտնաչափ բարձրութեան վրա, նրա մէջ գտնված զինամետալ, առանձին յարմարեցրած թիւղի միջոցով պէտք է ճայթիւններ: Ամբիկայի զինական շրջաններում չեն կասկածում, որ այդ տեսակ փորձերը կարող են դրական հետևանքներ ունենալ, բայց մի առանձին գործնական օգուտ այդ փորձերից չեն սպասում, որովհետև արած ծախսերի համեմատ բաւական քանակութեամբ անձրև ստանալ չէ կարելի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՐՎԱ, 10 օգոստոսի: Վրէշլի կայսրը, Շուիգ- լիցի գործարանը այցելած ժամանակ, մեծ քանա- կութեամբ ամենալաւ տեսակի մոխրագոյն մանուղ պատուիրեց:

ՊԵՏԵՐԲՈՒՊ, 10 օգոստոսի: Երէկ 123/4 ժամին, Չիլիօվիցա գիւղի մօտ, զօրահանդիսի ժամանակ, արեւելեան և արեւմտեան զօրաբաժինների զխա- ւոր ոյժերի ընդհարումից յետոյ յետ շարժվելու նշան տրվեց, և Նարու-կրանսօսէյեան զօրահան- ղէսը աւարտվեց. ապա տեղի ունեցաւ Բարձրա- գոյն նախաճաշիկ զարտու և ճաշ Պետերբու- ֆում, ուր թագաւոր կայսրը, թագուհի կայսրու- հին և թագաժառանգ Յեսարելիչը, Մեծ Խշխա- նուհի Կսենիա Ալեքսանդրովնա, ուրիշ Բարձրագոյն Անձինք և գերմանական կայսրը ժամանեցին երէկ

գամ կրկնված է գրքոյի մէջ: 11-րդ երեսում «НЕСПЯНИЕ ПЛОДЫ» թարգմանված է «կանանց պտուղներ»: հայ բրիտանիան ասում է՝ «խակ պտուղներ»: այդ դեռ ոչինչ. խակ թէ կանանց ասել ընթերցողը կը հասկանայ, բայց ասելով «ճաղալու» են 21-րդ երեսում հետեւա տողերը. «Съру расплавляютъ и пропитываютъ ею тряпки или паклю, а потомъ эти пропитанныя вещи сожигаютъ», հայերէն թարգմանված է. «Արջաւոր հալեցնում են և նրա մէջ ընկը- մում կտորներ, կամ քրքայ (корпии), որոնց յետոյ վառում են»: Առաջարկում ենք պ. Բազրաս Մի- բրիտանիան և իր թարգմանչին արջաւոր հա- ւեցնել (расплавлять) և քրքայ մէջ ընկղմել, քնչ զի- միական միութիւն էլ ստացվի, թող բարեհա- ճին ուղարկել պրոֆեսոր Կօլիսին, որով իրանց անունը դիտութեան մէջ կանխահայտնեն: Արջաւոր ԵՊՐԱ չէ, այլ յԵՆՅՆՅԻՆ ԿՍՈՐՈՍԷ է: Երկուսից մէկը. կամ թարգմանչը ուսուրէն լեղուկ մէջ թույլ է, կամ շատ անհոգ է վերաբերվել մի այնպիսի գրքոյի թարգմանութեան, որ մասնաւոր ժողովրդական ընթերցանութեան համար է նշանակված: Ուրեմն մնացած սխալները թեկն աւերող է, որովհետև մեր սպասածին հակառակ յօդուածն առանց այն էլ երկարացաւ:

Բժշկական ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԻԱՆԵՐ (ԹԻՖԼԻՍԻՆԵՐ)

պատմահանդիսը չեն թողնած—ծծմբի ծխելը դառ- նում է անօրուստ և ժամանակի կորուստ և ան- նպատակ ծախս: Գիծաղելի է, բայց իսկապէս ցուալի է, որ զբոյսիկ մէջ յիշած այդ միակ նը- պատակայարմար միջոցը, պ. թարգմանչը ա ը- ջ ա ս պ (желѣзный купоросъ) է թարգմանել: Բնագրի մէջ ինչպէս ղեղինֆելիցիական միջոց ա- ռաջարկում է хлорная известь (խլորակիլ), այդ- պէս չէ. պէտք է լինի хлоридная известь, այդ երկու նիւթերն էլ տարբեր նիւթեր են:

Գրքոյի մէջ պատմում է խօրեայից բժշկվե- լու և մի միջոց, որը գործ է ածել А. С. Хомя- ковъ (այդ աղբանուր թարգմանչը թողել է) և սուղարկված է եղել «Русский Архивъ»-ում: Այդ միջոցն է կանսիկի իւղի հետ կիտով չափ խառն- ված մաշուր կուպրի գործածութիւնը: Այդպիսի անխելաներ մտցնել ժողովրդական ընթերցանու- թեան համար կարծեմ գրքոյիցներ մէջ, մեծ յան- դիմութիւն է. բժշկական դրակամութեան մէջ յայտնի են և այնպիսի ղեպերը, երբ խօրեայով հիւանդները հանդամանքներից ստիպված բոլոր- վին անխելում են մնացել և առանց բժշկութեան, բայց և այնպէս կազմուածը դիտուել է և հիւան- ղը աւողջացել. սրանից չէ հետեւում, որ պէտք է մի և նոյնը քարոզել ժողովրդական ընթերցանու- թեան համար կարծեմ գրքոյի մէջ: Եթէ զիմնը այդպիսի պատահական ղեպերին, կարելի է և շատ օրինակներ բերել, բայց առաջագրի իրրի բժշկվելու միջոց, դա անստուգիւն է:

Վարակիչ հիւանդութիւնների համաճարակում- ները սահմանափակել և առաջին առնել—ամենա- գլխաւոր նախապաշտպանողական միջոցներն են և ժողովրդական ընթերցանութեան համար զը- ղոյիցներ աշխատասիրողը բարոյապէս պարտական թիւն և նպատակայարմար ղեղինֆելիցիական մի- ջոցները: Գրել խօրեայի մասին մի գրքակ է չը յիշել իբրև ղեղինֆելիցիական միջոց ս ու է է մ ա յ ի լ ը ա ս ա ու ու ը ղ, որ պէտք է ասել ղիտու- թեան տեսակետից միակ, (եթէ չը հաշուեց այ- թիւն է, եթէ չառնեք յանցանք: Մենք չենք խօսում և սուղեայի և այլ ղեղինֆելիցիական նիւթերի խառնուրդները՝ մասին, որոնց ղեղին- ֆելիցիական յատկութիւնները ուսումնասիրել են պրոֆեսոր Էյիւվալը, Պէլ և Շնէյ- կէր քիմիկոսները, իսկ ներքին գործերի մինի- ստրութեան բժշկական խորհրդը առաջարկել է (տես «Մշակ» №23, 24): Ժողովրդական ըն- թերցանութեան համար զըղոյիցներ կարծող պէտք է իր աշխատասիրութեան մեծ մասը նուիրի ղեղինֆելիցիայի բաժնին, պէտք է պարզէ նրանց գլխակցաբար կատարելու եղանակները և ցոյց տայ այն զըղուութիւնները, որ պէտք է աչքի առաջ ունենան ղեղինֆելիցիա կատարելու ժամանակ:

Երկու խօսք են թարգմանութեան մասին: Թէ ոչ է թարգմանչը այնքան էլ հետաքրքր չէ, բայց թէ նա, ինչպէս էլ իր թարգմանութիւնից

